



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիս 2022 թվականի թիվ 84

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԳԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13 -Ի ԹԻՎ 6 ՀԵՐԹԱԿԱՆ
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի թիվ 6 հերթական նիստի օրակարգը՝

1. Ծաղկաձոր համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ԼՖ» ծրագրի բաղադրիչ 2-ին մասնակցելու մասին:
3. Անահիտ Գրիգորյանին դրամական աջակցություն տրամադրելու մասին:
4. Համայնքի սեփականություն համարվող գույքը անժամկետ անհատույց օգտագործման տրամադրելու մասին:
5. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը և /կամ/ հողամասը անհատույց և / կամ/ նվիրատվության իրավունքով օտարման դեպքում գրանցման համար անհրաժեշտ ծախսերի կատարման մասին:
6. Ծաղկաձոր համայնքի սեփականություն համարվող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին:
7. Համայնքային սեփականություն համարվող հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին:
8. Հայաստանի Հանրապետության սեփականություն համարվող հողամասը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին:
9. Համայնքապետարանի կարիքների համար ձեռք բերվող աշխատանքները հրատապ բաց մրցույթի ընթացակարգով անցկացնելու համաձայնություն տալու մասին:

10. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի թիվ 21 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

11. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 15-ի թիվ 35 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

12. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 14-ի թիվ 65 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

13. Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխելու մասին:

14. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին:

15. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին:

16. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին:

17. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին:

18. Համայնքի սեփականություն համարվող գույքը անժամկետ անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

19. Համայնքի սեփականություն համարվող գույքը անժամկետ անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիս 2022 թվականի թիվ 85

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 82-րդ
հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

- Հաստատել Ծաղկազոր համայնքի 2022-2026 թվականների զարգացման ծրագիրը՝ համաձայն
հավելվածի:
- Սույ որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Հավելված
Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի
մայիսի 13-ի թիվ 85



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ



ԾԱՐԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Ն.Ռ. Հարությունյան

Հաստատվել է համայնքի ավագանու

ԾԱՐԿԱԶՈՐ
2022թ.

Բովանդակություն

1. Ներածություն.....-4

2. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....-6

3. Համայնքի զարգացման ծրագրի /ՀԶԾ/ կառուցվածքը.....-7

ԳԼՈՒԽ 1.Համայնքի իրավիճակի վերլուծություն և գնահատում

1.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն.....-8

1.2 Ժողովրդագրություն.....-14

1.3 Տեղական ինքնակառավարման մարմինը.....-16

1.4 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը.....-18

1.5 Համայնքում իրականացվող ծրագրերը.....-19

1.6 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները.....-22

1.7 Ձեռնարկություններ և տնտեսություն.....-25

1.8 Զբոսաշրջություն.....-25

1.9 Բնական պաշարներ.....-27

1.10 Գյուղատնտեսություն.....-28

1.11 Բնություն և շրջակա միջավայրի պահպանություն.....-29

1.12	Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն.....	-29
1.13	Կրթություն, մշակույթ, սպորտ, երիտասարդության հետ աշխատանքներ.....	-30
1.14	Չարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....	-34
1.15	Սոցիալական պաշտպանություն.....	-34
1.16	Աղետների ռիսկերի կառավարում.....	-35
1.17	Բնակելի և ոչ բնակելի ֆոնդերի շահագործում և նորոգում.....	-36
1.18	Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈԻԹՍ) վերլուծություն.....	-36

ԳԼՈՒԽ 2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները

2.1	Համայնքի զարգացման տեսլական.....	-
40		
2.2	Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....	-
41		

ԳԼՈՒԽ 3.	ՀԶԾ ֆինանսավորում.....	-42
----------	------------------------	-----

ԳԼՈՒԽ 4.	ՀԶԾ մոնիթորինգ.....	-111
----------	---------------------	------

4.	ՀԶԾ-ի վերաբերյալ իրազեկում, ՀԶԾ-ի իրականացում, վերահսկում և վերանայում.....	-
125		
5.	Ծաղկածոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը ըստ բնակավայրերի.....	-
126		
6.	Եզրափակում.....	-148

Ներածություն

Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2022-2026թթ. Չարգացման ծրագիրը (ՀԶԾ) մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ)-ի հավասարություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում):

ՀԶԾ-ի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

ՀԶԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մերթոդաբանական հետևյալ չափանիշները

- Համայնքի ֆինանսական կարողությունը
- Համայնքի բնակչության թվաքանակը
- Համայնքում առկա ենթակառուցվածքները և մատուցվող ծառայությունները
- Համայնքում առկա վտանգները (ռիսկերը)

Ներկայացվող ՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Ծաղկաձոր համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է ՀԶԾ-ի մշակմանը մասնակից կազմակերպությունների աշխատանքային խմբերի (այսուհետ՝ ԿԱԽ-երի) կողմից կատարված առաջարկներով, համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքում հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶԾ-ն մշակելիս որպես կողմնորոշող ուղղվածությունն դիտարկվել է համայնքը զարգացնելու, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլն) հնարավորությունները և դրանց արդյունավետ կառավարման իրականացումը: ՀԶԾ-ն մշակվել է մասնակցային եղանակով՝ հաշվի առնելով համայնքի շահագրգիռ բոլոր կողմերի առաջարկությունները: Հարցումների միջոցով վեր են հանվել համայնքի բնակիչներին, համայնքի տարածքում գործող պետական և մասնավոր կազմակերպություններին հուզող խնդիրները, դրանք գնահատվել են ԿԱԽ-երի կողմից և դասակարգվել ըստ առաջնահերթության:

ՀԶԾ-ն ներառում է նաև Ծաղկաձոր համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները: Այն Ծաղկաձոր համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Ծաղկաձորի համայնքի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է:

Համայնքի ղեկավարին կից ՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմինը փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի ներկայումս գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀԶԾ-ում ներառվում են համայնքի բոլոր պարտադիր խնդիրները և դրանց լուծման նպատակով նախատեսվող միջոցառումները: Միջոցառումները հստակ նկարագրված են, իսկ նախատեսված արդյունքները՝ չափելի: Դրանց իրականացումը պետք է շարունակաբար մոնիթորինգի ենթարկվի, որպեսզի սահմանված թիրախներից շեղումների դեպքում հնարավոր լինի քայլեր ձեռնարկել միջոցառումներ պլանավորված հուն վերադարձնելու նպատակով: ՀԶԾ շրջանակներում իրականացված

յուրաքանչյուր միջոցառում պարերաբար գնահատման կենթարկվի, որպեսզի բացահայտվեն թիրախային արդյունքներից հնարավոր շեղումների պատճառները, մշակվեն միջոցառումների իրականացման ավելի արդյունավետ իրականացման այլընտրանքային տարբերակներ և հետագայի համար դասեր քաղվեն:

Համայնքի զարգացման ծրագրում պարտադիր կարգով ներառվում են.

- 1) համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ.
- 2) շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ.
- 3) համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ.
- 4) աղետների ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ.
- 5) համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ
- 6) համայնքը միջազգային չափանիշներին համապատասխան զբոսաշրջության կենտրոն դարձնելուն ուղղված միջոցառումներ
- 7) համայնքում տեղացի և սփյուռքահայ ներդրողների մանր և միջին բիզնեսը ընդլայնելու համար պայմաններ ստեղծել, ստեղծելով նոր աշխատատեղեր մասնավոր սեկտորում
- 8) համայնքում գյուղատնտեսական զարգացմանն ուղղված միջոցառումներ

Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Տեղական ինքնակառավարման մարմինները ժամանակակից բարդ և փոփոկապակցված աշխարհում համայնքի զարգացման և հանրային ծառայությունների մատուցման միջոցով համայնքային կարիքների բավարարման գործառնությունները արդյունավետ իրականացնելու, իրենց վերապահված լիազորությունների սահմաններում համայնքի առջև ծառացած խնդիրներին ծրագրային և համակարգված մոտեցումներ, լուծումներ տալու համար պարտավոր են իրականացնել հեռանկարային ռազմավարական պլանավորում:

ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2022-2026 թթ. զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել 2015 թվականի ղեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ սահամանդրության 181-րդ հոդվածի համաձայն, ըստ որի՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը ընտրվում են հինգ տարի ժամկետով: ՀԶԾ-ը մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղական ինքնակառավարական մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության ոլորտներում, ՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Կոտայքի մարզպետարանի կողմից ներկայացված համայնքի զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Ծաղկաձոր համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶԾ-ն դիտարկվել են համայնքի զարգացման անհրաժեշտությունը, համայնքի տարածքում առկա

տնտեսությունների հնարավոր զարգացումը, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ զբոսաշրջության, գյուղատնտեսության փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը:

Համայնքի զարգացման 2022-2026թթ. ծրագրում հավասարապես ներառված են համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերը, նրանցում շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիկան պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ:

Ծրագիրը մշակվել է համայնքի ավագանու անդամների, բնակիչների, հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ միասին՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը : Կայուն զարգացման ծրագիրը, բովանդակում է քաղաքային տնտեսության ոլորտների վիճակը, հիմնախնդիրները և զարգացման հիմնական ուղղությունները:

Ծրագրի իրականացման կայուն երաշխիքներն են հանդիսանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ Օրենքը և այլ իրավական ակտեր, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները՝ Շաղկաձոր համայնքի ղեկավարը և ավագանին:

Շաղկաձոր համայնքի 2022-2026 թվականների հնգամյա ծրագրի լիարժեք իրականացումը հիմնարար նախադրյալներ կստեղծի համայնքի կայուն և համաչափ զարգացման համար: ՀՀ-ն մշակվել է մասնկցային եղանակով՝ հաշվի առնելով համայնքի բոլոր կողմերի առաջարկները: Հարցումների միջոցով առանձնացվել են համայնքում առկա բոլոր խնդիրները և դասակարգվել ըստ առաջնահերթության:

ՀՀԾ կառուցվածքը

ՀՀԾ-ն բաղկացած է 4 գլխից

1. Համայնքի իրավիճակի նկարագրություն
2. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում
3. ՀՀԾ ֆինանսավորում
4. ՀՀԾ մոնիթորինգ

ԳԼՈՒԽ 1 ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1.1 Համայնքի ընդհանուր նկարագրությունը, պատմական ակնարկ

Ծաղկածոր համայնք

Բնակչություն՝ 7243

Ծաղկածոր համայնքում ընդգրկված են հետևյալ բնակավայրերը՝

Ծաղկածոր

Մեղրածոր

Աղավնածոր

Արտավազ

Հանքավան

Մարմարիկ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Ծաղկածոր համայնք (Կոտայքի մարզ) հարմարավետ կուրորտային համայնք է՝ 7243 բնակչությամբ: Այն գտնվում է Թեղենիս լեռան արևելյան լանջին, ծովի մակարդակից միջինը 1840մ բարձրության վրա: Մայրաքաղաք Երևանից Ծաղկածոր համայնքը գտնվում է 60 կմ հեռավորության վրա: Ծաղկածորից հյուսիս և հարավ ձգվող զառիթափ լեռնաշղթաները ծածկված են անտառներով:

ԾԱՂԱՁՈՐ ՔԱՂԱՔ

Մակերեսը – 1618.29

բնակչության թիվը – 1540

ներկայիս անվանումը – Ծաղկածոր

պատմական անվանումները – Կեչառոյք, Դարաչիչակ, Ծաղկունյաց ձոր

հեռավորությունը մայրաքաղաքից - 50կմ

բնակչության կազմը – հայեր, ռուսներ, եզդիներ

կրթական հաստատություններ – միջնակարգ դպրոց, մուլտի-մանկապարտեզ, արվեստի դպրոց

արտադրական ձեռնարկություններ – չկա

բնակչության հիմնական զբաղմունքը – զբոսաշրջություն/հյուրատներ, հյուրանոցներ/:

ԴԱՏՄԱԿԱՆ ԱՎԵՆՐԿ

Ծաղկածորի անունն արդեն իսկ հուշում է, որ այն հնուց ի վեր գրավիչ է եղել որպես բնակավայր և հանգստավայր: «Ծաղիկների ծոր»-ում (ինչ բառացի նշանակում է քաղաքի անունը) մարդը բնակություն է հաստատել դեռևս Զ.ա. III-V դդ: Ծաղկունյաց լեռների հարավ-արևելյան մասում ընկած գեղատեսիլ հովտի անտառներում որսի են դուրս եկել հայոց արքաները և նախարարները (իշխանները): Արտոնյալ դասին տեղանքը հրապուրել է իր մեղմ, առողջարար կլիմայով: Դարեդար Ծաղկածորը մնացել է իշխանների տիրապետության տակ: Վաղ միջնադարում (IV — Vդդ.) այս հողերը պատկանել են հայոց թագավորի կալվածքները տնօրինող Վարաժնունի տոհմին: VIդ.-ում հովիտն անցավ հայկական ազդեցիկ Կամսարական տոհմի տիրապետության տակ, որը սերվել էր Իրանի 7 մեծագույն տներից մեկի՝ Կարին-Պահլավիդներից: Կամսարական տոհմի հետևորդ, Պահլավունի տոհմի առաջնորդ Գրիգոր Մագիստրոսը 1033թ. հրամայեց Ծաղկածորում կառուցել եկեղեցի, որը կոչեցին Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով: Այսպես հիմնվեց Կեչառիս վանական համալիրը՝ հովտի իրական գանձը: XVIIդ. սկզբին քոչվորական ցեղերը, գրավելով «Ծաղիկների ծորը», տեղանքը կոչեցին Դարաչիչազ (քաղաքը կրկին Ծաղկածոր վերանվանվեց 1947թ.-ին): Իսկ երբ Արևելյան Հայաստանը միացավ ռուսական կայսրությանը (1828թ.), Ծաղկածորը մտավ Էրիվան նահանգի մեջ: Այդ տարիներին Ծաղկածորում բնակություն հաստատեցին հազարավոր հայ գաղթականներ Արևմտյան Հայաստանից և Պարսկաստանից: Այստեղ իր ամառային նստավայրերը սկսեց կառուցել արդեն նահանգային հասարակության սերուցքը: Զաղաքը պահպանեց իր հայտնի հանգստավայրի կարգավիճակը նաև խորհրդային իշխանության օրոք: Ծաղկածորում հանգստանում էին ոչ միայն Հայաստանի քաղաքացիները, այլև այստեղ գալիս էին ԽՍՀՄ ողջ տարածքից: Հոկտեմբերի 1917-ին Երևանի տասնյակ պիոներական ճամբարներ, հանգստյան տներ: Ծաղկածորը տեղակայված է նույն բարձրության վրա, ինչ Մեխիկոն: Ուստի Մեքսիկայի մայրաքաղաքում կայանալիք՝ 1968թ.-ի Ամառային Օլիմպիական խաղերի նախաշեմին հենց Ծաղկածորում կառուցվեց ԽՍՀՄ զլխավոր սպորտային համալիրը: Այստեղ օլիմպիականներին և աշխարհի առաջնություններին են պատրաստվել աշխարհի տարբեր երկրների հավաքականները: Իսկ երբ 1972թ.-ին Թեղենիս լեռան լանջերին կառուցվեց ճոպանուղին, Ծաղկածորը հայտնի դարձավ նաև որպես լեռնադահուկային կուրորտ: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո քաղաքը արագ կերպով հաղթահարեց ճգնաժամը և դարձավ անկախ Հայաստանի և Հարավային Կովկասի առաջնակարգ զբոսաշրջության կենտրոններից մեկը:

Այսօր Ծաղկածորը ժամանակակից հանգստավայր է՝ զարգացած տուրիստական ենթակառուցվածքով, հիասքանչ շրջակա միջավայրով և անվտանգության բարձր մակարդակով: Այն հարմարավետ կուրորտային քաղաք է, որն առաջարկում է համաշխարհային չափանիշներին համապատասխան ծառայություններ: Զաղաքը սերտ կապեր է հաստատել լեռնադահուկային տուրիզմի համաշխարհային կենտրոնների հետ:

Վերջին տարիներին քաղաքում վերակառուցվեցին ու կառուցվեցին մոտ 60 և ավելի ժամանակակից հանգստյան տներ և հյուրանոցներ, 50-ից ավելի հյուրատներ, արդիականացվեցին նաև սպասարկման ոլորտի ենթակառուցվածքները: Եվ քաղաքը վերստին ձեռք է բերել հանրապետության զբոսաշրջության կարևոր կենտրոններից մեկի համբավն ու հեղինակությունը: Այստեղ իրենց հանգիստն են անցկացնում հազարավոր զբոսաշրջիկներ աշխարհի տարբեր երկրներից, միաժամանակ, այստեղ, ինչպես նախկինում, անց են կացվում բարձր մակարդակի գիտաժողովներ, տնտեսական համաժողովներ և զանազան հավաքներ:

ՄԵՂԱՁՈՐ ԳՅՈՒՂ

մակերեսը - 12429 հա

Բնակչության թիվը – 2627

Ներկայիս անվանումը – Մեղրածոր

պատմական անվանումները - Թեժառույք, Թայչարուխ

հիմնադրման ժամանակաշրջանը -1830թ

Հեռավորությունը մայրաքաղաքից - 60կմ

Բնակչության կազմը – հայեր, ռուսներ

Օգտակար հանածոներ - ոսկի, պղինձ, նեֆելինային սիենիտների 18 քիմիական նյութերով, այլումին

Կրթական հաստատություններ – միջնակարգ դպրոց, մուլտի-մանկապարտեզ

Մշակութային հաստատություններ - մարզամշակութային կենտրոն

Արտադրական ձեռնարկություններ – չկա

Բնակչության հիմնական զբաղմունքը - գյուղացիական տնտեսություն և /անասնապահություն , հողագործություն և մեղվաբուծություն /:

Հայտնի մարդիկ - Հակոբյան Թևոս Ղազարի տեխնիկական գիտությունների դոկտոր պրոֆեսոր, Ղարիբյան Իգիթ Գարեգինի պատմական գիտությունների դոկտոր, Մկրտչյան Ավետիք Թաթոսի տնտեսական գիտությունների դոկտոր, Խաչատրյան Սամվել Համագասպի տեխնիկական գիտությունների դոկտոր, Կարապետյան Կորյուն Աշոտի տեխնիկական գիտությունների դոկտոր, Միսայան Վրեժ Խաչատուրի փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ, Սարգսյան Լևոն Սարգսի տեխնիկական գիտությունների թեկնածու, Ներսիսյան Մելիք Գուրգենի տեխնիկական գիտությունների թեկնածու

Հոգևոր կառույցներ - Սուրբ Աստվածածին եկեղեցի, կաթոլիկ վանք /1190 թվական/

Պատմամշակութային հուշարձաններ - Մեծ հայրենականում զոհվածների հուշարձան

Համայնքի մասին գրքի առկայություն - առաջին գիրքը <<Արծափ-Մեղրաձոր>> 2006թ. Հեղինակ պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Իգիթ Ղարիբյան, երկրորդ գիրքը <<Մեղրաձոր>> 2008թ. հեղինակ՝ մանկավարժ Ալեքսան Հարությունյան

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՎՆԱՐԿ

Մեղրաձորը սարերի, ձորերի, կարկաչուն աղբյուրների, ու թավուտ անտառների գյուղ է:

Գորշ են սարերը, գորգանման անտառները, անտառամերձ գոտու և տեսարժան վայրերի առկայությունը տալիս է տուրիզմի զարգացման հնարավորություն: Գյուղը գտնվում է Փամբակի և Ծաղկունյաց լեռնազանգվածների հովտում, Մարմարիկ և Մեղրաձոր գետերի /Հրազդանի աջակողմյան վտակներ/ դելտայում, ծովի մակերեսից 1800մ բարձրության վրա: Փամբակի հարավահայոց լանջերը լերկ են, ժայռոտ ու կտրտված: Լանջերի ընդերքը հարուստ է ոսկով, պղնձով և նեֆելինային սիենիտների 18 քմիական նյութերով, այլումինը գերակշիռ է: Մեղրաձորում գործում է ոսկու հանքը 1987թվականից:

Համայնքի պատմական անվանումներից է Թեժառույք և Թայչարուխ:

Թեժառույք կոչվել է անտիկ ժամանակներից մինչև 17-րդ դարի սկիզբը Մարմարիկ Մեղրաձոր թեժ գիծ արագահոս գետերի դելտայում գտնվելու համար:

Անվան արմատներն են <<Թեժ>> և <<Առու>> բառերը:

Թայչարուխ կոչվել է 17-րդ դարի կեսերից մինչև 1946թ: Պարսից Աիրզունա-խանը դեպի Թուրքահայաստան մի քանի արշավանք է կատարել և մուսուլման բնակչությանը բռնազաղթեցրել անմարդաբնակ հայկական տարածքներ: Թեժառույքում հաստատվել են թուրք-կարակալականներ, որոնք էլ նոր բնակավայրին տվել են իրենց հնչմամբ Թայչարուխ անունը: Անունն առաջացել է թուրքերեն <<Թայ>>-զույգ և <<Չայ>>-գետ բառերի բարդացումից, որ նշանակում է զույգ գետերի արանքում գտնվող բնակավայր:

Գյուղը հիմնադրվել է 1830 թվականին: Գյուղը հայերով կրկին վերաբնակեցվել է 1830 թվականի մայիսին տաճկահայաստանի Բայազետի փաշայության Արծափ գյուղից արտագաղթածներով /52 ծուխ, 336 շունչ/:

Մեղրաձոր- ՀՍՍՀ գերագույն խորհրդի 30.05.1946թ. որոշմամբ, ի թիվս հանրապետության բազում այլ բնակավայրերի, Թայչարուխը վերանվանվեց Մեղրաձոր:

Համայնքում առկա է թվով վեց բազմաբնակարան շենքեր, 154 բնակարանով, որում ապրում են հիմնականում դրսեկ հայեր, և 25 ծուխ Աղրբեջանից փախստական հայեր:

Գյուղում գործում են հիմնանորոգված դպրոցը 360 աշակերտով, 33 ուսուցչով, մանկապարտեզը՝ 12 հաստիքով 63 երեխայով, մարզամշակութային կենտրոնը՝ 12 հաստիքով, որտեղ գործում է դաշնամուրի, դուդուկի, դիուլի, պարի, ձյուդո ըմբշամարտի խմբակներ, որտեղ հաճախում են 100 աշակերտ:

Գյուղապետարանի աշխատակամը 13 հաստիք, որից քաղաքական պաշտոն՝ 1 համայնքի ղեկավար՝ հայցողական պաշտոններ 2, համայնքային ծառայողներ 5, տեխնիկական սպասարկողներ 5:

Գործում է կապիտալ նորոգված բժշկական ամբուլատորիան 15 հաստիքով, 2 բժիշկներով:

Գյուղը տվել է գիտության նվիրյալներ 10 գիտնական, որոնցից 4-ը դոկտորի, 6-ը գիտության թեկնածուի գիտական աստիճան ունեն, 2-ը պրոֆեսորի կոչումով:

Գյուղի դիմաց, 2կմ անտառապատ մի հրվանդանի վրա 1190-ականներին վրացահայ իշխան-գորավար Իվանե Չաքարյանի պատվերով կառուցվել է կաթոլիկ վանք, որը վնասվածքով կանգուն է մինչ օրս:

Գյուղամիջում է սուրբ Աստվածածին եկեղեցու 2 շենքը /առաջինը փայտածածկ մատուռ է եղել/, որը

կառուցվել է 1881թ. և գործել է մինչև 1931թ.: 70 տարի շարունակ նպատակին չի ծառայել, հետո համայնքի ղեկավարի օգնությամբ, բարերարների նվիրատվությամբ և համայնքի բյուջեի միջոցների հաշվին հիմնանորոգվել և օծվել է 2011թ հոկտեմբերի 15-ին:

Գյուղում բնակեցված է 60 տոհմ ու տոհմաճյուղ: Գրվել է 24-ի համառոտ պատմությունը, կազմվել է տոհմաճառը:

Գյուղը տվել է Մեծ հայրենականում 186, Արցախի հերոսամարտում 10 զոհ: 1980 թվականներին կառուցվել է Մեծ հայրենականում զոհվածների հուշարձան, որը դարձավ ոչ միայն խնկարկելի սրբավայր, այլ նաև ուխտատեղի:

ԱՐԱՎՆԱՁՈՐ ԳՅՈՒՂ

Մակերեսը - 3566 հա
Բնակչության թիվը - 1275 մարդ
Ներկայիս անվանումը - Աղավնաձոր
պատմական անվանումները -Բաբաքչի
հիմնադրման ժամանակաշրջանը - 1830 թվական
Հեռավորությունը մայրաքաղաքից - 60 կմ
Բնակչության կազմը - հայեր
Օգտակար հանածոներ - գրանիտ
Կրթական հաստատություններ - 1
Մշակութային հաստատություններ - 1
Մարզական հաստատություններ - չկա
Արտադրական ձեռնարկություններ - չկա
Բնակչության հիմնական զբաղմունքը - անասնապահություն, հողագործություն
Հայտնի մարդիկ - Արամ Դանիելյան, Անդրանիկ Մանուկյան
Հոգևոր կառույցներ - VII դարում կառուցված եկեղեցի:
Համայնքի մասին գրքի առկայություն - չկա

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՎՆԱՐԿ

1830 թվականին գյուղը վերաբնակեցվել է Ալաշկետի Ղազի գյուղից եկած 28 մարդկանցով, որոնք գաղթել էին ռուս-թուրքական պատերազմից հետո: Գյուղը գտնվում է Փամբակ և Ծաղկունյաց լեռնաշղթաների միջև: Գյուղում զարգացած է զբոսաշրջությունը, քանի որ այն ունի գեղատեսիլ վայրեր և գործող բազմաթիվ հանգստյան տներ: Համայնքն ունի հերոսական անցյալ: Հայրենական մեծ պատերազմին համայնքից մասնակցել են 300 հոգի, որից 76-ը ետ չեն վերադարձել: Արցախյան պատերազմի առաջին իսկ օրվանից գյուղի երիտասարդներից կազմավորվել է <<Ալաշկետ>> ջոկատը, որի հրամանատարն էր Չարգանդ Դանիելյանը, ով 1991 թվականին Գետաշենի պաշտպանության մարտերում հերոսաբար զոհվեց: Այժմ նրա անունով է կոչվում Աղավնաձորի միջնակարգ դպրոցը: Արցախյան պատերազմում զոհվեցին նաև Աղավնաձորի զավակներ Անդրանիկ Խաչատրյանը և Արթուր Պետրոսյանը:

ԱՐՏԱԿԱՉ ԳՅՈՒՂ

Մակերեսը - 10638հա
Բնակչության թիվը - 558
Ներկայիս անվանումը - Արտավազ
պատմական անվանումները - Թաքառլու
հիմնադրման ժամանակաշրջանը - 1950թ.
Հեռավորությունը մայրաքաղաքից - 65 կմ.
Բնակչության կազմը - հայեր
Օգտակար հանածոներ - չկա
Կրթական հաստատություններ - միջնակարգ դպրոց
Մշակութային հաստատություններ - ակումբ
Մարզական հաստատություններ - չկա
Արտադրական ձեռնարկություններ - չկա
Բնակչության հիմնական զբաղմունքը - գյուղատնտեսություն և անասնապահություն
Հոգևոր կառույցներ - Արտավազ վանք 7-րդ դար
Պատմամշակութային հուշարձաններ - չկա

գյուղի մասին գրքի առկայություն - չկա

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Նախկինում Թաքյառլու: Գտնվում է Մարմարիկ գետի ափին, Հրազդանից 24 կմ հեռավորության վրա՝ դեպի հյուսիս-արևմուտք: Նախկինում միավորված էր Հանքավանի կաթնաանասնապահական տնտեսության հետ: Կլիման առողջարար է, ամառային հանգստի համար օգտակար: Գյուղի դիմաց, Մարմարիկ գետի ձախ ափին կա քանդված եկեղեցի: Մոտակայքում են Արտավազի հին վանքն ու Կարակալա և Ուլաշիկ լքված գյուղերը: Գյուղի տարածքում են գտնվում հանգստյան տներ, ճամբարներ:

ՀԱՆՔԱԿԱՆ ԳՅՈՒՂ

Մակերեսը - 8141 հա

Բնակչության թիվը - 100

Ներկայիս անվանումը - Հանքավան

պատմական անվանումները - Միսխանա

հիմնադրման ժամանակաշրջանը - 19-րդ դար

Հեռավորությունը մայրաքաղաքից - 83 կմ

Բնակչության կազմը - հայեր, հույներ, ռուսներ

Օգտակար հանածոներ - մոլիբդեն, ոսկի

Կրթական հաստատություններ - չկա

Մշակութային հաստատություններ - չկա

Մարզական հաստատություններ - չկա

Արտադրական ձեռնարկություններ - չկա

Բնակչության հիմնական զբաղմունքը - անասնապահություն

Հոգևոր կառույցներ - կաթոլիկ եկեղեցի

Պատմամշակութային հուշարձաններ - չկան

Համայնքի մասին գրքի առկայություն - չկա

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Մինչև 1949թ. Միսխանա, Միխայլովա: Հեռավորությունը մարզկենտրոնից 29 կմ հյուսիս-արևմուտք: Բնակչությունը հիմնականում 1990-1991թթ.

Ադրբեջանից բռնագաղթած հայեր են: Զբաղվում են անասնապահությամբ, հացահատիկի մշակությամբ, բանջարաբուծությամբ: Հանքավանը բարձր կլիմայական առողջարան է: Կլիման չափավոր է, ամառը՝ զով, խոնավ, ձմեռը՝ մեղմ, ձյունառատ, երկարատև: Հանքավանի աղբյուրների ջրերն իրենց քիմիական կազմով նման են եսենտուկյան ջրերին: Հանքավանում բուժում են ստամոքսի, աղիքների, լյարդի, լեղապարկի և ենթաստամոքսային գեղձի հիվանդություններ: Գործում են առողջարաններ և հանգստյան տներ:

ԳՈՌԳՈՉ ԳՅՈՒՂ

Բնակչության թիվը - 23

Մեղրաձոր համայնքի վարչատարածքային մաս է կազմում Գոռգոչ փոքր ամառանոցային գյուղը, որի /նախկինում Կորչլու/ ադրբեջանցի բնակչությունը կամովին ադրբեջան արտագաղթեց 1992թ:

ՄԱՐՄԱՐԻԿ ԳՅՈՒՂ

Մակերեսը - 3144 հա

Բնակչության թիվը - 755

Ներկայիս անվանումը - Մարմարիկ

պատմական անվանումները - Փաշի գյուղ

հիմնադրման ժամանակաշրջանը -1915թ.

Հեռավորությունը մայրաքաղաքից - 58 կմ

Բնակչության կազմը - հայեր, եզդիներ
Օգտակար հանածոներ - չկա
Կրթական հաստատություններ - միջնակարգ դպրոց
Մշակութային հաստատություններ - չկա
Մարզական հաստատություններ - չկա
Արտադրական ձեռնարկություններ - չկա
Բնակչության հիմնական զբաղմունքը - անասնապահություն և գյուղատնտեսություն
Հոգևոր կառույցներ - Սուրբ Հովհաննես եկեղեցի
Պատմամշակութային հուշարձաններ - 1945թ.հայրենական պատերամում զոհված զինվորների հիշատակին կառուցված հուշարձան, Արցախյան պատերազմում և 1915թ-ի ցեղասպանության նահատակների հիշատակին կառուցված հուշատախտակ
Համայնքի մասին գրքի առկայություն - չկա

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Մարմարիկ գյուղը գտնվում է Փամբակ և Ծաղկունյաց լեռնաշղթաների միջև, Մարմարիկ գետի հովտում, Հրազդանից 12 կմ հյուսիս-արևմուտք։
Մարմարիկի սարերը հայտնի են իրենց սառնորակ աղբյուրներով, որը բավարարում է գյուղին 100 տոկոսով։ Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կարտոֆիլի, կաղամբի, մշակությամբ։ Գյուղում պահպանվել է Սուրբ Հովհաննես եկեղեցին։ Գյուղի ջրերով սնվում է նաև Մեղրաձոր գյուղը։ Կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով։

ՓՅՈՒՆԻԿ ԳՅՈՒՂ

Բնակչության թիվը – 365
Բնակչության կազմը - հայեր
Նախկինում Ախունդով։ Մինչև 90-ական թթ. գյուղի բնակիչների հիմնական մասը կազմում էին այլազգիներ։

1.2 Ժողովրդագրություն

Համայնքի բնակչության թիվը կազմում է 7243 մարդ, որոնցից տղամարդիկ կազմում են 52.69 տոկոսը

Համայնքի բնակչությունը

	Տարիքային խմբեր	Ընդամենը	Արական	Իգական
1	0-17 տարեկան	1380	725	655
2	18-62 տարեկան	4971	2691	2280
3	63 տարեկան և ավելի	893	403	490
	Ընդամենը	7243	3819	3425

Բնակչության սոցիալական կազմը

Սոցիալական կազմը	Քանակը
Կանայք	3428
Տղամարդիկ	3819
Թոշակառուներ	896
Փախստականներ	56
Միակողմանի ծնողագուրկ երեխաներ	22
Պատերազմի մասնակիցներ	296
Հաշմանդամներ	224
Չբաղվածներ	2046
Գործազուրկներ	602
Ընտանիքների (ծխերի) թիվը	1973
Փարոս՝ ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ	150

207 գրանցված գործազուրկների կրթական մակարդակը`

Կրթություն	Քանակ
բարձրագույն կրթություն	8
միջին մասնագիտական կրթություն	25

Միջնակարգ կրթություն	151
տարրական	23


Ծաղկաձոր համայնքում առկա են մոտ 2046 զբաղված քաղաքացիներ, որից ըստ տնտեսական ճյուղերի՝

Տնտեսական ոլորտ	Քանակ
Հյուրանոցներ. ռեստորաններ	203
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	42
Շինարարություն	119
Տրանսպորտի և կապի բնագավառ	98
Բնակարանային կոմունալ տնտեսություն, բնակչության կենցաղսպասարկման ոչ արտադրական տեսակների բնագավառ	103
Առողջապահության ոլորտ	44
Առևտրի և հանրային սննդի բնագավառ	130
Կրթության, մշակույթի և արվեստի բնագավառ	191
Գյուղատնտեսական ծառայություններ	482
Այլ ճյուղեր	634

1.3 Տեղական ինքնակառավարման մարմինը

2022 թ. Դեկտեմբերի 5-ին Ծաղկաձորում կայացան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Ընտրվեց համայնքի ղեկավար և համայնքի ավագանի: Ավագանին բաղկացած է 15 անդամներից:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը՝



Համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների հաստիքների թիվը՝

- Համայնքի ղեկավարի աշխատակազմ - 64
- <<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն >> ՀՈԱԿ - 21
- <<Մեղրաձոր բնակավայրի Լևոն Գալստյանի անվան մանկապարտեզ>> ՀՈԱԿ - 16
- <<Արտավազ բնակավայրի մանկապարտեզ>> ՀՈԱԿ - 7
- <<Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց>> ՀՈԱԿ -13
- <<Մեղրաձորի ԲԱ>> ՀՈԱԿ- 14
- <<Մեղրաձոր բնակավայրի Սամվել Մուրադյանի անվան Մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ - 14
- <<Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ -24
- <<Արծափ>> ՀՈԱԿ – 14

1.4 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Ծաղկաձորի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի N 26-Ն որոշմամբ հաստատված 2022 թվականի բյուջեի նախագծում եկամուտների գումարը ծրագրվել է 642 031.5 հազար դրամ,ծախսերի գումարը՝ 1 236 189.4 հազար դրամ, իսկ դիֆիցիտի գծով՝ 594 157.9 հազար դրամ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱԺԻՆԸ (%) ԸՍՏ

2022թ	2023թ	2024թ	2025թ	2026թ
69.6	64.5	66.6	75.3	75.3

1.5 Համայնքում իրականացվող ծրագրերը

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ.դրամ)
1	Ծաղկածոր, Մեղրածոր, Աղավնածոր, Արտավագ, Մարմարիկ և Հանքավան բնակավայրերի ճանապարհների կապիտալ վերանորոգում	150.000.00
2	Մեղրածորի գյուղի մանկապարտեզի բակի խաղահրապարակի կառուցման աշխատանքներ	50.000.00
3	Մեղրածոր գյուղի մանկապարտեզի շենքի ներքին հարդարման աշխատանքներ	50.000.00
4	Մարմարիկ գյուղի մանկապարտեզի կառուցուման աշխատանքներ	150.000.00
5	Մարմարիկ գյուղի մանկապարտեզի գույքի ձեռք բերում	30.000.00
6	Աղավնածոր գյուղի մանկապարտեզի խաղահրապարակի գույքի ձեռք բերում	30.000.00
7	Աղավնածոր գյուղի մանկապարտեզի ներքին հարդարման աշխատանքներ	40.000.00
8	Մեղրածոր բնակավայրի մշակույթի տան լոկալ ջեռուցման և շենքի ներքին հարդարման աշխատանքներ	40.000.00
9	Մեղրածոր բնակավայրի մշակույթի տան բակի և ցանկապատի կապիտալ նորոգման աշխատանքներ	50.000.00
10	Աղավնածոր բնակավայրի մշակույթի տան շենքի հիմանանորոգում	100.000.00
11	Մարմարիկ բնակավայրի մշակույթի տան նորոգման աշխատանքներ	50.000.00
12	Մարմարիկ բնակավայրի մշակույթի տան գույքի ձեռք բերում	30.000.00

13	Ծաղկածոր, Մեղրածոր, Աղավնածոր, Արտավազ-Փյունիկ, Մարմարիկ և Հանքավան բնակավայրերի կոյուղու կառուցման աշխատանքներ	500.000.00
14	Ծաղկածոր, Մեղրածոր, Աղավնածոր, Արտավազ-Փյունիկ, Մարմարիկ և Հանքավան բնակավայրերի խմելու ջրագծի կապիտալ նորոգման և կառուցման աշխատանքներ	400.000.00
15	Մեղրածոր և Փյունիկ բնակավայրերի գերեզմանատների ցանկապատի նորոգման և կառուցման աշխատանքներ	100.000.00
16	Ծաղկածոր, Մեղրածոր, Աղավնածոր, Արտավազ, Մարմարիկ և Հանքավան բնակավայրի ոռոգման ցանցի կառուցման աշխատանքներ	350.000.00
17	Մեղրածոր բնակավայրի թվով 6 շենքերի տանիքների, մուտքերի, բակերի նորոգման և կառուցման աշխատանքներ	80.000.00
18	Ծաղկածոր, Մեղրածոր, Աղավնածոր, Արտավազ-Փյունիկ, Մարմարիկ և Հանքավան բնակավայրերի խաղահրապարակների կառուցման աշխատանքներ	200.000.00
19	Ծաղկածոր, Մեղրածոր, Աղավնածոր, Արտավազ-Փյունիկ, Մարմարիկ և Հանքավան բնակավայրերի հեղեղատարների հիմնանորոգման և կառուցման աշխատանքներ	150.000.00
20	Մեղրածոր, Փյունիկ և Մարմարիկ բնակավայրերի հանդիսությունների սրահների հիմնանորոգման աշխատանքներ	100.000.00
21	Ծաղկածոր համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատության վերանորոգման աշխատանքներ	70.000.00
22	Ծաղկածոր, Մեղրածոր, Աղավնածոր, Արտավազ, Մարմարիկ և Հանքավան բնակավայրերի արտաքին լուսավորության համակարգի արդիականացման աշխատանքներ	200.000.00
23	Ծաղկածորի համայնքի տարածքում կանգառների կառուցման և տարածքի բարեկարգման աշխատանքներ	20.000.00

24	Կանաչ տարածքների բարեկարգման աշխատանքներ	150.000.00
25	Ծաղկաձոր քաղաքի գլխավոր ճեմուղին ցուցասրահներով և խաղահրապարակներով հագեցնելու աշխատանքներ	200.000.00
26	Ծաղկաձոր համայնքի համայնքապետարանի և վարչական շենքերի վերանորոգման աշխատանքներ	300.000.00
27	Հանգստի և ժամանցի կենտրոնների կառուցում	200.000.00
28	Ծաղկաձոր քաղաքում հանդիսությունների կառուցման աշխատանքներ	130.000.00
	Ընդամենը	3.900.000.0

1.6 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

2022-2026թթ բյուջեների մուտքերի կանխատեսումը

Հ/հ	Մուտքերի անվանումը	2022թ կանխ	2023թ կանխ	2024թ կանխ	2025թ կանխ	2026թ կանխ
1	2	3	4	5	6	7
□	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	642031.5	724312.1	769146.1	1042146.1	1043146.1
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐԶԵՐ	318410.7	326166.0	371000.0	644000.0	645000.0
1,1	Գույքային հարկեր անշարժ գույքից	231277.0	235166.0	277000.0	547000.0	545000.0

	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	214920.0	226000.0	272000.0	544000.0	544000.0
	Հողի հարկ	16357.0	9500.0	5000.0	3000.0	1000.0
1,2	Գույքային հարկեր այլ գույքից	41532.0	43000.0	44000.0	45000.0	46000.0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	41532.0	43000.0	44000.0	45000.0	46000.0
1,3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	45601.7	48000.0	50000.0	52000.0	54000.0
	Տեղական տուրք	45601.7	48000.0	50000.0	52000.0	54000.0
2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՅՆԵՐ	195405.6	257146.1	257146.1	257146.1	257146.1
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկուզբունքով տրամադրվող դոտացիաներ	156383.3	156383.3	156383.3	156383.3	156383.3
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ					
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	762.8	762.8	762.8	762.8	762.8
2,4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	38259.5	100000.0	100000.0	100000.0	100000.0
3	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	128215.2	141000.0	141000.0	141000.0	141000.0
3,3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	39050.1	40000.0	40000.0	40000.0	40000.0
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	1684.2	1700.0	1700.0	1700.0	1700.0
3,5	Վարչական գանձումներ	80045.1	90000.0	92000.0	92000.0	92000.0
	Տեղական վճարներ	39545.1	48000.0	48000.0	48000.0	48000.0
	Համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	40500.0	42000.0	44000.0	46000.0	6000.0
3,6	Մուտքեր տույժերից, տուգանքներից	1000.0	1000.0	1000.0	1000.0	1000.0

3,9	Այլ եկամուտներ	8120.0	10000.0	10000.0	10000.0	10000.0
-----	----------------	--------	---------	---------	---------	---------

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱԺԻՆԸ
(%)ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ**

2022թ	2023թ	2024թ	2025թ	2026թ
69.6	64.5	66.6	75.3	75.3

Համայնքի 2022-2026թթ բյուջեների ծախսերի ուղղվածությունը

Հ/ h	Մուտքերի անվանումը	2022թ կանխ	2023թ կանխ	2024թ կանխ	2025թ կանխ	2026թ կանխ
1	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	1236189.5	1425500.0	1162000.0	1214500.0	1238000.0
1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում,	334253.4	340000.0	345000.0	350000.0	355000.0
	Պաշտպանություն	21200.0	10000.0	8000.0	7000.0	6000.0
2	Հանապարհային տրանսպորտ	343687.5	150000.0	170000.0	180000.0	180000
	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-150000.0	-150000.0	-150000.0	-150000.0	-150000.0

3	Շրջակա միջվայրի պաշտպանություն	136825.9	140000.0	130000.0	120000.0	110000.0
4	Աղբահանում	77655.0	80000.0	85000.0	90000.0	95000.0
5	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	78819.0	81000.0	83000.0	85000.0	88000.0
6	Հանգիստ, մշակութի և կրոն	141220.0	110000.0	120000.0	150000.0	160000.0
7	Նախադպրոցական կրթություն	145582.7	150000.0	170000.0	180000.0	190000.0
8	Արտադպրոցական դաստիարակություն	43075.0	35000.0	38000.0	40000.0	42000.0
9	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	11500.0	14500.0	13000.0	12500.0	12000.0
	Պահուստային ֆոնդ	51370.4				

1.7 Ձեռնարկություններ և տնտեսություն

Համայնքի տարածքում գործում են մոտ 60 հյուրանոցներ և 40-ից ավելի հյուրատուն

Շինարարական ոլորտում զբաղվածների թիվը շուրջ 54 է:

Առևտրի ոլորտում զբաղվածների թիվը կազմում է շուրջ 255 , իսկ սպասարկման ոլորտում՝ 1237 մարդ:

Հաշվի առնելով նաև այլ ոլորտների պետական և համայնքային կազմակերպությունների աշխատակազմերը զբաղվածների թիվը համայնքում կազմում է շուրջ 1100 մարդ:

1.8 Զբոսաշրջություն

Հիմնահարցեր

- Տեսարժան վայրերի սահմանափակ քանակ:
- Հյուրընկալության ոլորտի մասին հավաստի և ամբողջական տեղեկատվության պակաս:
- Ժամանցի և զվարճությունների վայրերի բացակայություն:

- Մշակութային միջոցառումների կազմակերպման և տարածման մասին տեղեկատվության պակաս
- Համայնքում տեղեկատվական կետերի բացակայություն
- Հայաստանի սահմաններից դուրս պատշաճ ներկայացման բացակայություն

Նպատակ

Պահպանել զբոսաշրջային գրավչությունները, վերականգնել հյուրասիրության ավանդույթները, բարելավել հյուրընկալման ծառայությունների որակը, թաղամասերը, զբոսաշրջային կառույցները և ենթակառուցվածքները, խրախուսել մասնավոր հատվածի մասնակցությունը զբոսաշրջության ոլորտ:

Ծաղկածոր համայնքը դարձնել հանրապետական երիտասարդական միջոցառումների կենտրոն:

Խնդիրներ

1. Հիմնել համայնքային զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն
2. Ձարգացնել վեբ և մոբայլ հավելվածները՝ զբոսաշրջության ոլորտի խթանման համար
3. Մշակել ուղեցույցներ
4. Իրականացնել կարողությունների զարգացման դասընթացներ
5. Քույր և գործընկեր քաղաքների հետ համագործակցության ընդլայնում
6. Ստեղծել և տարածել տուրիզմին և բիզնեսին վերաբերվող ամբողջական տեղեկատվական բազա
7. Պատրաստել գովազդային հոլովակներ, տպագրել բուկլետներ և արտաքին գովազդային պաստառներ
8. Կառուցել բազմաֆունկցիոնալ կանգառներ տեղացի արհեստավորների և փոքր ձեռնարկատերերի համար, տրամադրել տարածք, որտեղ նրանք կարող են ցուցադրել իրենց աշխատանքները և վաճառել իրենց արտադրանքը
9. Բարեկարգել երթուղիները և տեղադրել զբոսաշրջիկներին կողմնորոշող ցուցանակներ:
10. Ունենալ վերապատրաստված ուղեկցողներ և գիդեր, զբոսաշրջիկներին դիմավորող անձնակազմ, թարգմանիչներ և գրասենյակային այլ ծառայություններ
11. Փողոցներում կողմնորոշող ցուցանակների տեղադրում առավել կարևորություն ներկայացնող տեսարժան վայրերի նկարներով, մատնանշելով ճանապարհային ուղղությունները
12. Զբոսաշրջության միջազգային օրվա ամենամյա նշում և միջոցառումների կազմակերպում

1.9 Բնական պաշարներ

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը հա, այդ թվում՝

Հողերի տեսակը	Միավորը /հա/
բնակավայրերի փաստացի սահմաններում ընդգրկված	532.74
արդյունաբերության, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության	148.73
Էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ ենթակառուցվածքների	99.16
հատուկ պահպանվող տարածքների	6672.15
հատուկ նշանակության	
գյուղատնտեսական նշանակության	23116.89
անտառային /ազգային պարկ/	8700.94

Ջրային	148.39
--------	--------

Անտառային գոտում գերակշռում են անտառային շականագույն հողերը, դրանք աչքի են ընկնում հզորությամբ և հորիզոնների լավ դիֆերենցվածությամբ: Կարբոնատներով հարուստ ապարների վրա զարգացած են հողերը, որոնք տափաստանացված շականակագույն հողերի հետ միասին մոզայիկ հանդիպում են ողջ անտառային գոտում: Ենթալայան գոտում զարգացած են լեռնամարգագետնային սևահողերը: Այստեղ որտեղ տարածքը բրոզացված չէ, հողերը աչքի են ընկնում հզոր հումուսային շերտով` մինչև 40 սմ:

Անտառները հիմնականում ունեն բնական ծագում: Երկրաբանական կառուցվածքը բարդ ու բազմազան է: Այստեղ հանդիպում են գրեթե բոլոր երկրաբանական ժամանակաշրջանների ապարներ: Սակայն առավել տարածված են յուրայի, վերին կավճի, Էոցենի, օլիգոցե-միոցենի ու չորրորդական հասակի ապարների գոյացումներ:

Տարածքում կան մետաղային և ոչ մետաղային բազմաթիվ և բազմատեսակ հանքավայրեր: Օրինակ. մետաղներից` ծարիրի, պղնձի, գունավոր ու թանկարժեք այլ տարրերի, ոսկու հանքավայր, իսկ ոչ մետաղային հանածոներից` կրաքար, ավազ, դոլոմիտ, խիճ, գլաքար, կավ, պորֆիրիտ, ավազաքար և այլ շինանյութերի հանքավայրեր:

Ծաղկածոր քաղաքային համայնքը և Նրան հարող տարածքն աչքի է ընկնում գեղատեսիլ լանդշաֆտով, նշանակալից ռեկրեացիոն ռեսուրսներով:

1.10 Գյուղատնտեսություն

Բնակչության 49.5%-ը զբաղվում է գյուղատնտեսությամբ:

Գյուղատնտեսական նշանակության հողերը բաշխված են հետևյալ կերպ` .

Տեսակ	23116.89	Հա
Խոտհարքներ	1881.65	Հա
Արոտավայրեր	15988.40	Հա
Վարելահողեր	942.79	Հա
Բազմ. Տնկարաններ	5.40	Հա
Այլ հողատեսքեր	4298.65	Հա

Հիմնահարցեր

- Գյուղացիական տնտեսությունների անբավարար վիճակ:
- Տեխնիկայի բացակայություն
- Ցածր բերքատվություն՝ տարիներ շարունակ հողը չպարարտացնելու պատճառով:
- Հանդամիջյան ճանապարհների ոչ բարվոք վիճակ:
- Տոհմային անասնապահության բացակայություն:
- Գյուղմթերքների իրացման և վերամշակման հնարավորությունների բացակայություն:

Նպատակ

Գյուղատնտեսությամբ զբաղվող բնակչության համար ստեղծել ներհամայնքային բավարար պայմաններ:

Խնդիրներ

Գյուղմթերքների վերամշակմամբ և անասնապահությամբ զբաղվող քաղաքացիների համար կազմակերպել սեմինար-դասընթացներ՝կատարվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Կերային բազայի ամրապնդում, ցանովի խոտաբույսերի ցանքատարածությունների ընդլայնում, մշակաբույսերի նոր տեսակների ներդրում:

Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերում, տեխնիկական վերազինում

Գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծում

1.11 Բնություն և շրջակա միջավայրի պահպանություն

Բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում համայնքի ղեկավարի ուշադրության կենտրոնում են բնապահպանման անվտանգությունը, շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունների հետ կապված վտանգների գնահատումը և ահրաժեշտության դեպքում դրանց կանխարգելումը: Իրականացվում և նախատեսվում են կանաչ տարածությունների ընդլայնման, մաքրման և պահպանման աշխատանքներ:

Համայնքում պարբերաբար ծառատունկեր են իրականացվում: Ներկայումս Ծաղկաձոր համայնքը հանրապետության կանաչ համայնքներից մեկը: Համայնքը ունի այգիների կառուցման, արդիականացման, լանդշաֆտային ձևավորման և նոր ծառատեսակներով համալրման կարիք:

1.12 Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն

Համայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 107.270կմ, մակերեսը 950հազ ք.մ վիճակը բավարար: Համայնքից միջև մոտակա մայրուղի 10 կմ է երկարությամբ է՝ վիճակը բավարար: Համայնքային վարչական տարածքում բացակայում է ներհամայնքային փոխադրումը: Անհրաժեշտ է ձեռք բերել ներհամայնքային փոխադրումները իրականացնելու համար միկրոավտոբուս: Համայնքի վարչական տարածքում գործող փողոցներում տեղադրված են ճանապարհային երթևեկության նշանները անհրաժեշտ քանակով: Ծաղկածոր համայնքի վարչական տարածքում գործում են հիմնական կահավորված հասարակական տրանսպորտի կանգառներ: Երթևեկության անվտանգության նպատակով համայնքում իրականացվել է ճանապարհների գծանշում : Առկա է տրանսպորտային հաղորդակցություն մարզկենտրոնի և մայրաքաղաքի հետ

1.13 Կրթություն, մշակույթ, սպորտ, երիտասարդության հետ աշխատանքներ

Կրթություն

Հիմնահարցեր

- Համայնքի մանկապարտեզների շենքերի, բակերի, խաղահրապարակների հիմնանորոգման անհրաժեշտություն, գույքի, մեթոդական և ծրագրային նյութերի պակաս:
- Առկա իրավիճակի պահպանման և զարգացման անհրաժեշտություն:

Նպատակ

Բարելավել մանկապարտեզներում հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման որակը, ապահովել նախադպրոցական կրթության ոլորտի պետական քաղաքականության իրականացումը:

Խնդիրներ

*Բարձրացնել նախադպրոցական հաստատությունների որակն ու դերը
Վերանորոգման կարիք ունեցող մանկապարտեզների շենքերի մասնակի վերանորոգում և հիմնանորոգում:
Գույքի նորացում, ինչպես նաև նորագույն տեխնոլոգիաների հնարավորինս ներդրում մանկապարտեզներում:
Մարմարիկ գյուղի համար կառուցել մանկապարտեզ*

Մշակույթ

Հիմնահարցեր

- Առկա իրավիճակի պահպանման և զարգացման անհրաժեշտություն:

Նպատակ

Բարելավել երեխաների գեղագիտական դաստիարակության կազմակերպումն ու կրթական ծրագրերի իրականացման որակը:

Խնդիրներ

*Գյուղական բնակավայրերում բացել գեղարվեստի դպրոցի մասնաճյուղեր
Պահպանել գեղարվեստի դպրոցի կողմից մատուցվող ծառայությունների առկա քանակը և որակը:*

Մանկական երաժշտական դպրոց

Հիմնահարցեր

- Առկա իրավիճակի պահպանման և զարգացման անհրաժեշտություն:

Նպատակ

Բարելավել երաժշտական կրթության ապահովման պայմանները և կազմակերպումը, բարձրացնել դպրոցի կողմից մատուցվող ծառայությունների որակը:

Խնդիրներ

*Գյուղական բնակավայրերում բացել երաժշտական դպրոցի մասնաճյուղեր
Պահպանել երաժշտական դպրոցի կողմից մատուցվող ծառայությունների առկա քանակը և որակը:*

Գրադարանի կենտրոնացված համակարգ

Հիմնահարցեր

- Նոր գրականության բացակայություն:
- Անհրաժեշտ գույքի և գրադարանային սարքերի ու պարագաների պակաս:
- Առկա իրավիճակի պահպանման և զարգացման անհրաժեշտություն:

Նպատակ

Բարելավել բնակչության գրադարանային-մատենագիտական սպասարկման մակարդակը:

Խնդիրներ

Ավելացնել գրքերի քանակը 4 տարվա ընթացքում գրքային ֆոնդի 4 տոկոսի չափով:
Ձեռք բերել գույք
Պահպանել գրադարանի կողմից մատուցվող ծառայությունների առկա քանակը և որակը
գյուղական բնակավայրերում բացել գրադարանի մասնաճյուղեր

Մշակույթի տուն

Հիմնահարցեր

- Մշակույթի տան շենքերի հիմնանորոգում
- Գույքի անբավարար վիճակ
- Ջեռուցման բացակայություն
- Առկա իրավիճակի պահպանման և զարգացման անհրաժեշտություն:

Նպատակ

Զարգացնել քաղաքի մշակույթային կյանքը:

Խնդիրներ

Վերանորոգել մշակույթի տան շենքերը՝ կառուցելով լոկալ կաթսայատուն ջեռուցման նոր համակարգով, համալրել նոր գույքով
Գյուղերում ստեղծել հասարակական միջոցառումների և նախաձեռնությունների սրահ
Պահպանել մշակույթի տների կողմից մատուցվող ծառայությունների առկա քանակը և որակը:

Սպորտ

Հիմնահարցեր

- Թույլ գույքային բազա:
- Առկա իրավիճակի պահպանման և զարգացման անհրաժեշտություն:

Նպատակ

Ապահովել համայնքային մարզական կյանքի բնականոն զարգացումը:

Խնդիրներ

Նոր մարզագույքի ձեռք բերում

Քաղաքի երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի լայն տարածմանը նպաստակաուղղված զանգվածային մշակութային, մարզական միջոցառումների կազմակերպում

Գյուղական բնակավայրերում բացել սպորտային խմբակներ

Պահպանել մարզահամալիրի կողմից սաներին մատուցվող ծառայությունների առկա քանակը և որակը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Հիմնահարցեր

- Համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցման անհրաժեշտություն
- Հաշմանդամների սոցիալական ինտեգրման ծրագրերի ոչ բավարար քանակ:
- Չբաղվածության խնդիրների աստիճանական կարգավորման և գործազրկության մակարդակի նվազում

Նպատակ

Նպաստել սոցիալական խնդիրների լուծմանը համայնքում:

Խնդիրներ

Պարենային աջակցության ծրագրեր՝ միայնակ տարեցների, հաշմանդամների բազմազավակ և կարիքավոր ընտանիքների համար Ապահովել Բարեգործական ճաշարանի անվճար սնունդ ծրագրին համայնքային ամենամսյա մասնակցությունը

Կարիքավորության գնահատման համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար Ամանորի կապավցությամբ նվերների տրամադրում

Դրամական օժանդակություններ սոցիալական գործընկեր ՀԿ-ներին՝ համատեղ ծրագրերի իրականացում

1.14 Չարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Չարգացման համար խոչընդոտներ են հանդիսանում վարկատու և դոնոր կազմակերպությունների տեղական և միջազգային ներդրողների պասիվ մասնակցությունը:

